

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Եկեղեցին
փորձանքի
կը հանդիպի



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Adapted by: Ruth Klassen
Alastair Paterson

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children
www.M1914.org

©2020 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



Աստուծոյ Որդիին մեռնելէն համբարնալէն յիսուն
օր ետք, Սուրբ Յովհաննէս եկաւ բնակելու համար իր
հետեւողներուն մէջ: Թէեւ աշակերտները չէին
հասկնար, թէ ինչպէս Աստուած հայրը, Աստուած
որդին (Յիսուս) եւ Աստուած Սուրբ Յովհաննէս կրնան
մէկ Աստուած ըլլալ, անոնք ուրախ էին որ Աստուած
իրենց հետ է: Աստուած հրաշալի բաներ ըրաւ,
որպէսզի օգնէ առաքեալները կարենան
պատմել Յիսուսի մասին:



Ժողովուրդը, որ հաւատաց
Յիսուսին ամէն ինչ իրար
բաժնեցին, որպէսզի
օգնեն աղքատները:



Բայց մէկ զոյգ, որոնք
Անանիա եւ Սափիրա կը
կոչուէին անհաւատարիմ
էին: Անոնք հողամաս մը
ծախեցին եւ այնպէս
մը ձեւացուցին,
որ դրամը
առաքեալներուն
կը բերեն:
Գաղտնօրէն,
բաւական
իրենց
համար
պահեցին:




"Ինչո՞ւ սատանան սիրտդ ստախոսութեամբ լեցուց Սուրբ Հոգիին դեմ...", հարցուց Պետրոս Անանիայի: "Դուն մարդու սուտ չխօսեցար, այլ Աստուծոյ":



Ետքը Անանիա գետին
ինկաւ եւ իր վերջին շունչը
փչեց: Երիտասարդ
մարդիկ անոր մարմինը
փաթեցին կտորով եւ
շալկեցին թաղելու
համար:



Քիչ ժամանակ ետք, Սափիրա եկաւ, տակաւին լուռ
չունէր իր ամուսնոյն մահէն: Դրամին համար ան ալ
սուտ խօսեցաւ եւ նոյնը եղաւ: Մեծ վախ մը տիրեց
բոլորին, որոնք լսեցին այս պատմութիւնը:



Սուրբ Հոգին,
Աստուած շատ
մը նշաններ եւ
հրաշքներ
գործեց
առաքելներուն
ձեռքով:
Օրինակի
համար

հիւանդները
առողջացան, երբ
Պետրոսի շուքը
ինկաւ անոնց վրայ:



Ժամանակն
էր մեծ
հրաշքներու,
Աստուծոյ
ներկայութիւնը
ցոյց տալու
համար: Մարդիկ
հաւատացին
Յիսուսի:

Այս շատ ընդվզեցուց
բազմաթիւ բարձր
քահանայապետներ:
Ան բանտարկել տուաւ
առաքեալները:





Բայց երեւցաւ
Տիրոջ հրեշտակը,
բացաւ բանտի
դռները եւ անոնց
դուրս բերաւ եւ
ըսաւ. "Գացէ՛ք,
տաճարին
մէջ կեցէք եւ
ժողովուրդին
խօսեցէք այս
կեանքի ամեն

խօսքերը:" Առաքեալները դուրս եկան եւ սկսան
քարոզել Յիսուսի մասին: Առաւօտուն, բարձր
քահանայապետին մարդիկը բանտը պարապ
գտան:



Երբ վերջապես ան գտաւ անոնց, բարձր
քահանան պախարակեց առաքեալները: "Ձեզի
մէնք չիրամայեցի՞նք, որ չսորվեցնենք անոր
անունով": "Մենք կը նախընտրէինք հնազանդիլ
Աստուծոյ քան մարդու", Պետրոս եւ մնացեալ
առաքելները
պատասխանեցին:



Բարձր քահանան զայրացած էր եւ կ'ուզէր մեռցնել
առաքեալները, փոխարէնը, ան հրամայեց, որ
ծանր կերպով ծեծուին եւ ազատ արձակուին:
Հակառակ իրենց սուկալի ցաւին առաքեալները
հնազանդեցան Աստուծոյ եւ շարունակեցին
Յիսուսի մասին
քարոզել:



Օր մը Ստեփանոս կոչուող մարդ մը
ձերբակալուեցաւ: Ստեփանոս կը սիրէր Տէր
Յիսուսը: Սուրբ Հոգին անոր կը գործածէր, որ
ուրիշներուն պատմէ Յիսուսի մասին: Մի քանիներ
սուտ խօսեցան ըսելով, որ



Ստեփանոս Աստուծոյ
դէմ կը խօսի:
Անօրէն դատե
տաք Ստեփանոս
պատժուեցաւ
գործածուելով
մինչեւ մահ իր
հաւատքին
համար Յիսուսի:




Նախքան մեռնիլը,
Ստեփանոս, լեցուած
Սուրբ Հոգիով,
դէպի երկինք
յարեց իր
աչքերը եւ
տեսաւ
Աստուծոյ
եւ Յիսուսի
փառքը, որ
Աստուծոյ
աջին կեցած
էր:



Բազմութիւնը կը քարկոծէր
Ստեփանոսը, սակայն
ան կը կանչէր Աստուծոյ
ըսելով. "Տէր Յիսուս,
դիմաւորէ իմ հոգիս":
Ետքը, Յիսուսի
նման խաչի
վրայ, այս
քաջ մարդը իր
վերջին շունչը
գործածեց
աղօթքի,
որ Աստուած
ներէ իրեն
սպաննողները:



Ստեփանոսի մահը սկիզբն էր նոր
դատապարտութիւններու: Սաւուղ կոչուող
երիտասարդ մարդ մը, որ Ստեփանոսի
մեռցնողներուն օգնած էր ձերբակալեց ամեն
քրիստոնէայ, որ կը գտներ: Շատեր լքեցին իրենց
տուները ճուտայի եւ Սամարիայի մէջ: Միայն
առաքեալները



Երուսաղէմ մնացին:



Թեև իրենց թշնամիները փորձեցին մեռցնել իրենց,
անոնք որոնք ամեն տեղ ցրուած էին կը քարոզէին
լաւ լուրը Յիսուսի մասին: Ոչինչ կրնար
կեցնել Յիսուսի հետեւորդները,
որովհետեւ Աստուծոյ Սուրբ
Յոգին կ'ապրէր անոնց մէջ
եւ իրենց մէջէն կը գործէր:



Եկեղեցին փորձանքի կը հանդիպի

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Գործք Առաքելոց 5 - 7

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

